ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Թեքեյան կենտրոն» Հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Թեքեյան Կենտրոն» Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ Հիմնադրամի իրավասու կառավարման մարմինը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներին և այլ իրավական ակտերին համապատասխան պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի մշակումը, կիրառումը և պահպանումը, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը: Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում հաշվապահական գրանցումների և փաստաթղթերի պատշաճ պահպանման համար, որոնք ցանկացած ժամանակ ճշգրտորեն կարտացոլեն Հիմնադրամի ֆինանսական վիճակը: Նա պարտավոր է անհրաժեշտ քայլեր ձեռնարկել՝ ուղղված Հիմնադրամի միջոցների պահպանությանը, կեղծիքների ու խախտումների բացահայտմանը և կանխմանը:

Address: 27a Khorenatsi, 1, Yerevan, Armenia Tel.: (+37410) 541272, 560852 E-mail: hakzor@netsys.am

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք ՀՀ աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որ ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացումը: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա՝ ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրել է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, սակայն ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, հաշվապահական անձնակազմի կողմից կատարված հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռքբերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր աուդիտորական կարծիքն արտահայտելու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ՀՀ Հաշվապահական հաշվառման մասին օրենքի, հաշվապահական հաշվառման ստանդարտների և այլ իրավական ակտերի:

11 մարտի, 2011 թ.

Աուդիտի ղեկավար՝ Գառնիկ Ալեքսանյան

Տնօրեն՝ Տիգրան Զորյան

Address: 27a Khorenatsi, 1, Yerevan, Armenia Tel.: (+37410) 541272, 560852 E-mail: hakzor@netsys.am